

թիւններ ստացել, մինչդեռ, ընդհակառակը, Վահան Մամիկոննեանն է ստացել»:

Այդպիսի անհոգ վերաբերմունք մի համբաւաւոր հեղինակի կողմից դէպի իր գրուածքը, կրկնում ենք, վերին սատիճանի ցաւալի է մանաւանդ այն պատճառով, որ գրքոյկի նիւթը էական կարևորութիւն ունեցող հարց է:

«Ի՞նչ անհնք, որ փոքր ազգերը չը հալուեն ժամանակիս լայնափոր և լայնաբերան քուրայի մէջ»:

Շատ քչերն են մեզանում մտածում այդ հարցի մասին: Շատ քչերը՝ նոյնիսկ նրանցից, որոնք ի պաշտօնէ կոչուած են հանրային շահերը պաշտպանելու և հասարակութիւնը դեկավարելու:

Մեր իմացական և վարիչ տարրերը մեծ մասամբ՝ կամ բարոյապէս գօսացած ու մտաւորապէս կապկացած կօսմօպօլիսներ են, կամ «ծառերի յետելից անտառը չը տեսնող» լիբէրալներ, և կամ չօվինիստ պահպանողականներ՝ խօսքով ազգասէր, գործով՝ ազգակեր:

Այդպիսի հանգամանքներում չի կարելի չողջունել «Միքանի խօսքի» նման մի գրքոյկ, ինչքան էլ նա անբաւարար լինի գրական տեսակէտից:

S. 8.

I.—Ման. «ՕՏԱՐՈՒԹԵԱՆ Մէջ». հրատ. Լ. Բ. 32 ել., գ. 15 կ., Թիֆլիս, 1903 թ.:

Այն ժամանակ, երբ Ռուսսոն փառաբանում էր բնական վիճակը և նզովում քաղաքակրթութիւնը, Վոլտէրը բացադառնչում էր. «Ռուսսօի զգերը կարգալիս՝ սիրու ուզում է չորեկթաթ ման գալ»:

Դժուար էր աւելի փայլուն կերպով հեղնել այն, ինչ որ ծիծաղելի ծայրայեղութիւն էր Ռուսսօի հանձարեղ քարոզի մէջ:

Նոյն ծայրայեղութիւնը, նուազ տաղանդաւոր կերպով, մենք գտնում ենք ուստ նարօղնիկների գրուածքներում, ուրոնք իրանց արձագանքներն ունեցան նաև մեր զրականութեան մէջ:

Պ. I.—Ման.—ի պատկերը, որ, ի դէպ ասել, գեղարուեստական տեսական տեսակէտից թոյլ գրուածք է, մի այդպիսի արձագանք է, և ուշացած արձագանք:

Ասում եմ՝ ուշացած, որովհետեւ Ռուսաստանում նարօդ-

նիկութիւնը վաղուց կորցրել է իր ազդեցութիւնը, տեղի տալով նոր ուղղութիւնների, որնք, նոյնքամ իրէալասէր լինելով, որքան նարօդնիկութիւնը, աւելի ճիշտ գաղափար ունեն սակայն պատմութեան ընթացքի և յառաջադիմութեան գործոնների մասին:

«Օտարութեան մէջ»-ի հեղինակը փառարանում, երկինք է հասցնում գիւղացիներին, և խօսք չի դանում քաղաքը և քաղաքցիներին պախարակելու համար:

Գիւղացիների միակ պակասութիւնը՝ տղիտութիւնն է. ուրիշ ոչ մի պակասութիւն չ'ունեն նրանք, «իսկ քաղաքում: Այստեղ տիրում է կեղծութիւնը իր բոլոր զզուելի տեսակներով: Այստեղ մոռացել են ճշմարիտ Աստծուն, Այստեղ տիրում է փողապաշտութիւնը: Այստեղ տիրում է նոր արձարծուած հեթանոսութիւնը, կուպաշտութիւնը: Այստեղ այլև Աստծուած չը կայ. մարդիկ վաղուց երես են դարձրել նրանից, և պաշտում են մի նոր, ուրիշ աստծոյ—փողին»:

Այդպէս ուրեմն թող նզովուի քաղաքը, որի արդիւնքն է քաղաքակրթութիւնը, ինչպէս այդ երեւում է թէ հայերէն, թէ եւրոպական (ցիվլիզացիա) բարի ստուգաբանութիւնից: Թող նզովուի քաղաքը, որ լոյս է սփռում երջանիկ գիւղերում աիրող «խաւարի թագաւորութեան» մէջ, և կեցցէ գիւղը, որ այնքան յաճախ ներկայանում է իրը ստրկութեան բուն, ուր հարիւրաւոր զեեր կունում են մի փայտի առաջ, կեցցէ նահապետական կեանքը իր դայլ քրդերով և ոչխար «ֆլայով», կեցցէ թմբուլը իր խաչաղողներով, կեցցեն բոլոր գիւղացիք, ի բաց չ'առած և նրանց, որնք շահասէր կրօնափոխութեան կարպետներ են համդիսանում մեղնում:

Թող չը կարծուի, թէ ես հիացած եմ քաղաքներից և քաղաքցիներից: Ես միայն կարծում եմ, որ այն, ինչին այժմ ձգտում են մարդկութեան լաւագոյն ոյժերը, աւելի մեծ չափով կայ քաղաքներում, քան գիւղում, և իրականանալու է զլսաւրապէս քաղաքացիների միջոցով, ինչպէս քաղաքացիների միջոցով է կատարուել այն բոլորը, որով այժմեան մարդկութիւնը տարբերում է նախապատմական մարդկային նախիրներից:

S. 3.

Արշակ Հախալերդեան. «ՎՃՏԱՀԱՐ ՄՐՑԻՑ», 64 ել. գ. 20 կ. Թիֆլիս, 1902 թ.:

Պ. Արշակ Հախալերդեան բանաստեղծական ձիքը չ'ունի,